

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ (ԿՈՄԻՍԻՍԻ), ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ_____**

ք. Երևան

« »

20 թ.

«Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (իրավաբանական հասցե՝ ք. Երևան, 0015, Վ. Սարգսյան 2), այսուհետ՝ «Բրոքեր», ի դեմս -----, որը գործում է բանկի կանոնադրության հիման վրա, որի անունից ----- լիազորագրով հանդես է գալիս -----, մի կողմից, և -----, այսուհետ՝ «Հաճախորդ», ի դեմս ----- մյուս կողմից, միասին անվանվելով «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵԿԱԱԲԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

- 1.1 Սույն Պայմանագրում օգտագործվող հասկացությունները ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով, Բրոքերի Տնօրինության որոշմամբ հաստատված յուրաքանչյուր պահի դրությամբ գործող խմբագրությամբ Բրոքերի պաշտոնական վեբ կայքում հրապարակված և http://ameriabank.am/userfiles/file/brokerage/brokerage_terms_ed7.pdf վեբ հղումով հասանելի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից բրոքերային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններ-ով (այսուհետ՝ Պայմաններ) սահմանված և այդտեղ կիրառվող իմաստը, եթե այլ բան ակնհայտորեն և միանշանակորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից: Սույն պայմանագրի դրույթները մեկնաբանելիս գերակայությունը տրվում է Պայմաններով սահմանված հասկացությունների սահմանմանը:
- 1.2 Այլ հասկացությունները, որոնք օգտագործվում են սույն պայմանագրում, սակայն սահմանված չեն 1.1. կետում նշված ակտերում, մեկնաբանվում են՝ հիմնվելով դրանց կիրառման գործարար շրջանառության սովորույթների և միջազգային փորձի վրա:
- 1.3 Ցանկացած փաստաթղթի (ներառյալ սույն պայմանագիրը) վկայակոչումը, մեջբերումը կամ դրան հղումը ենթադրում է տվյալ փաստաթղթի գործող տարբերակի՝ ներառյալ բոլոր փոփոխությունների ու լրացումները, մեջբերում, վկայակոչում կամ դրան հղում, եթե տվյալ վկայակոչման, մեջբերման կամ հղման մեջ հատուկ նշմամբ այլ բան չի նախատեսված:
- 1.4 Կետերին բոլոր հղումները վերաբերում են սույն պայմանագրին առանց Պայմանների, եթե հատուկ նշմամբ այլ բան չի նախատեսված:
- 1.5 Ցանկացած անձի վկայակոչումը վերաբերում է նաև ժամանակ առ ժամանակ նրան փոխարինող անձին, նրա ներկայացուցչին կամ իրավահաջորդին:
- 1.6 Գլուխների անվանումներն ունեն կողմնորոշիչ նշանակություն և չեն ազդում դրանց բովանդակության մեկնաբանման վրա: Սույն պայմանագրում վեբ հղումներով հասանելի փաստաթղթերը (սակագներ, ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններ և այլն) հանդիսանում են սույն պայմանագրի բաղկացուցիչ մասերը և սույն պայմանագրի պայմանները որոշվում են դրանցով՝ դրանցում կարգավորված մասով: «Սույն պայմանագիր» արտահայտությամբ (հասկացությամբ) ընդգրկվում են նաև վեբ հղումներով հասանելի փաստաթղթերը, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում տվյալ հղումի մասնավոր դեպքից կամ չի արված հակառակը փաստելու վերաբերյալ հատուկ նշում:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 2.1 Բրոքերը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով, յուրաքանչյուր պահի դրությամբ գործող խմբագրությամբ Բրոքերի պաշտոնական վեբ կայքում հրապարակված և http://ameriabank.am/userfiles/file/brokerage/Brokerage_Service_Rates_and_Fees_arm.pdf վեբ հղումով հասանելի՝ Բրոքերային ծառայությունների մատուցման սակագներով (այսուհետ Պայմանագրում՝ Սակագներ) սահմանված վճարի դիմած Հաճախորդին մատուցել սույն պայմանագրի 2.2 կետում նշված ծառայությունները:
- 2.2 Արժեթղթերի այդ թվում՝ ածանցյալների շուկայում բրոքերային ծառայություններ (այսուհետ սույն պայմանագրում և Պայմաններում՝ նաև Բրոքերային ծառայություններ կամ Ծառայություններ), մասնավորապես՝
- 1) ընդունել Հաճախորդի հանձնարարականները վերջինիս հաշվին արժեթղթերով գործարքներ կատարելու վերաբերյալ և հաղորդել դրանք ի կատարում այլ անձանց:
 - 2) Հաճախորդի հանձնարարականների հիման վրա, Հաճախորդի հաշվին, սակայն իր անունից կատարել արժեթղթերով գործարքներ, այդ թվում՝ առաջնային տեղաբաշխմանը մասնակցելու (բաժանորդագրվելու) գործարքներ և ածանցյալներով իրավունքների իրականացմանն ուղղված գործարքներ:
 - 3) Հաճախորդի հանձնարարականների հիման վրա արժեթղթերով գործարքներ կնքել նրա հաշվին և նրա անունից, ընդ որում, Բրոքերը գործարքները կնքում է Հաճախորդի անունից այն դեպքերում, երբ նրա կարծիքով Հաճախորդի անունից գործարքի կնքումը վերջինիս համար ապահովում է առավել բարենպաստ պայմաններ և թույլատրված է ԱՀ-ի կանոններով, ինչպես նաև ոչ բավարար ծածկույթով (մարժինալ) գործարքներ կնքելիս:
 - 4) Իրականացնում է սույն կետի 1-ից 3-րդ ենթակետերում նշված ծառայությունների համար անհրաժեշտ վերջնահաշվարկի (settlement) համար անհրաժեշտ գործողություններ՝ Հաճախորդի հաշվից փոխանցելով և հաշվին մուտքագրելով գործարքների կատարման համար պահանջվող և դրանց արդյունքում ստացվող միջոցները՝ Պայմաններում նշված պայմաններով և կարգով:
 - 5) Հաճախորդին տրամադրում է հաշվետվություններ իր կողմից կատարված գործարքների վերաբերյալ, ինչպես նաև իր կողմից Հաճախորդից ընդունված և ի կատարում փոխանցված հանձնարարականներով այլ անձանց կողմից կատարված գործարքներով միջոցների շարժի վերաբերյալ:
- 2.3 Հաճախորդը մատուցված ծառայությունների դիմաց Բրոքերին վճարում է բանկի Սակագների համապատասխան:
- 2.4 Միայն և բացառապես Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերով Գործարքների կնքման նպատակով Բրոքերը հաճախորդին տրամադրում է Վերջնահաշվարկի շեղման հնարավորություն՝ Բրոքերի կողմից սահմանված առավելագույն շեղման յուրաքանչյուր պահի դրությամբ սահմանված մեծության սահմաններում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 3.1 Հաճախորդը պարտավորվում է բարեխղճորեն և պատշաճ կարգով վճարել մատուցված ծառայությունների դիմաց՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և Սակագներին համապատասխան, ինչպես նաև հատուցել Բրոքերից համապատասխան գործարքի կնքման համար համապատասխան ԱՀ-ների և Գործակալների կողմից գանձվող ծախսերը (բացառությամբ գործարքի կնքման համար Գործակալներին վճարվող սովորական մշտական միջնորդավճարների):

- 3.2 Բրոքերն պարտավորվում է բարեխղճորեն և պատշաճ կերպով մատուցել սույն պայմանագրի 2.2. կետում նշված ծառայությունները՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր պարտականություններին վերաբերող իմպերատիվ կանոնները:
- 3.3 Կողմերը պարտավորվում են բարեխղճորեն համագործակցել սույն պայմանագրի կատարման շրջանակներում:

4. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ

- 4.1 Հաճախորդը հայտարարում և հավաստիացնում է, որ՝
- 1) ինքը իր գրանցման (քաղաքացիության) երկրի օրենսդրության համաձայն պատշաճ իրավունակությամբ և գործունակությամբ օժտված անձ է և իրավասու է կնքել սույն պայմանագիրը:
 - 2) Մույն պայմանագիրը ստորագրող անձինք (իրավաբանական անձի դեպքում) իրավասու են ստորագրել այն Հաճախորդի անունից համաձայն օրենսդրության և Հաճախորդի ներքին իրավական ակտերի և այդպիսի ստորագրությամբ Հաճախորդի համար ստեղծել իրավական ուժ ունեցող պարտականություններ:
 - 3) Հաճախորդի՝ սույն պայմանագրի շրջանակներում Բրոքերի կողմից գործարք կնքելու համար օգտագործվող և ստացվող միջոցները (արժեթղթերը և դրամը) ծանրաբեռնված չեն երրորդ անձանց իրավունքներով և ստացվել են օրինական աղբյուրներից:
 - 4) Հաճախորդը պատշաճ կերպով ծանոթացել է սույն պայմանագրին, Բրոքերի գլխամասում և համացանցային (web) կայքում փակցված բոլոր սակագներին, հայտարարագրերին, տեղեկացումներին, զգուշացումներին, պայմաններին և այլ փաստաթղթերին, չունի դրանց հետ կապված որևէ հարց, առաջարկություն, դրանց բովանդակությունը իրեն լրացուցիչ բացատրելու կարիք չունի և լիարժեքորեն գիտակցում է այն:
 - 5) Համաձայն է, որ սույն պայմանագրով իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարները և ծառայությունները մատուցելու համար Բրոքերի կրած այլ ծախսերը անակցեպտ կարգով Բրոքերի կողմից գանձվեն Բրոքերային հաշվից, Բրոքերի մոտ բացված և սպասարկվող բանկային հաշիվներից, ինչպես նաև Հաճախորդի բանկային այլ հաշիվներից:
 - 6) _____ (այլ երաշխիքներ՝ ըստ անհրաժեշտության)
- 4.2 Բրոքերը երաշխավորում է, որ՝
- 1) պատշաճ իրավունակությամբ և գործունակությամբ օժտված անձ է և իրավասու է կնքել սույն պայմանագիրը,
 - 2) որի բրոքերային ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ լիցենզիաները և թույլտվությունները,
 - 3) Բրոքերի անունից սույն պայմանագիրը ստորագրող անձինք իրավասու են ստորագրել այն և այդպիսով Բրոքերի համար ստեղծել սույն պայմանագրից բխող պարտավորությունները:

5. ՀԱՃԱՆՈՐԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

- 5.1 Հաճախորդի միջոցները հաշվառվում են սույն պայմանագրի և Բրոքերի և Հաճախորդի միջև _____թ. կնքված Պահառության ծառայությունների մատուցման պայմանագրով (այսուհետ՝ Պահառության պայմանագիր) սահմանված կարգով:
- 5.2 Հաճախորդի՝ ծառայությունների մատուցման նպատակով օգտագործվող և այդպիսի մատուցման արդյունքում կնքված գործարքների արդյունքում ստացված դրամական միջոցների հաշվառման նպատակով Բրոքերը Հաճախորդի համար բացում է բրոքերային հաշվի հատուկ կարգավիճակ

ունեցող բանկային հաշիվներ՝ AMD, RUB, USD, EUR արժույթներով այսուհետ բոլորը միասին և յուրաքանչյուրը առանձին՝ Բրոքերային հաշիվ՝ բանկում գործող հաշիվների բացման, վարման և փակման կարգին համապատասխան:

- 5.3 Բրոքերային հաշվով գործառնությունների իրականացման կարգը, պայմանները, առանձնահատկությունները և սահմանափակումները սահմանվում են Պայմաններով:
- 5.4 Հաճախորդի՝ Ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և դրանց արդյունքում ստացված արժեթղթերը Բրոքերը հաշվառում է արժեթղթերի հաշիվների վրա՝ Պահառության պայմանագրին և Պայմաններին համապատասխան:

6. ԿԱՊԻ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՎ ՊՍՏԱՍԽԱՆՍՈՒ ԱՆՁԻՆՔ

- 6.1 Սույն պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև տեղեկատվության ցանկացած փոխանակում, հաղորդագրություն, փաստաթղթերի ներկայացում, փոխանցում, փոխանակում համարվում է պատշաճ կերպով իրականացված, եթե փաստաթուղթն առաքվել է հետևյալ հասցեներով՝
 - 1) Բրոքերի համար՝ ք. Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 9, էլ. փոստ՝ brokerage@ameriabank.am, հեռ՝ +374 10 513170, +374 10 513169
 - 2) Հաճախորդի համար՝ _____, ֆաքս՝ _____, էլ փոստ՝ _____, հեռ՝ _____
- 6.2 Կողմերը սույնով հավաստում են, որ 6.1 կետում նշված հասցեներով առաքված հաղորդագրությունը համարվում է պատշաճ կերպով առաքված՝ կապի հուսալի միջոցներով: Կողմերի համար միմյանց միջև կապ հաստատելու և տեղեկատվություն փոխանակելու համար հուսալի միջոցներ են համարվում Պայմաններում նշված կապի միջոցները:
- 6.3 Պայմանների 9.1 կետում նշված հաշվետվությունները Բրոքերը Հաճախորդին ներկայացնում է՝
 հայերեն անգլերեն ռուսերեն լեզվով (լեզուներով):
- 6.4 Սույն պայմանագրի շրջանակներում Բրոքերի հետ Հաճախորդի հարաբերությունների համար պատասխանատու և իրավասու լիազորված անձ է հանդիսանում _____: Հաճախորդը սույն պայմանագիրը կնքելուց հետո 2 օրվա ընթացքում Բրոքերին է ներկայացնում նշված անձի անձնական տվյալները (անձնագրի տվյալները) և իրավաբանական անձի գործադիր մարմնի հաստատմամբ՝ ստորագրությամբ և կնիքով հաստատված (իրավաբանական անձի դեպքում) կամ նոտարի կողմից հաստատված (ֆիզիկական անձ Հաճախորդի դեպքում)՝ իրավասու/լիազորված անձի (անձանց) ստորագրության նմուշները: Նշված անձի փոփոխության կամ նոր իրավասու/լիազորված անձի ավելացման դեպքում Հաճախորդը պարտավոր է գրավոր ծանուցել Բրոքերին իր նոր կամ հավելյալ լիազորված անձի վերաբերյալ՝ նշելով, որ վերջինս հանդիսանալու է Հաճախորդի լիազորված իրավասու անձը՝ ներկայացնելով վերջինիս՝ սույն կետով սահմանված կարգով վավերացված ստորագրության նմուշները: Լիազորված անձը Հաճախորդի անունից իրավասու է հանդես գալ սույն պայմանագրի շրջանակներում որևէ գործողություն կատարելու համար միայն պատշաճ ձևակերպված (ֆիզիկական անձ Հաճախորդի դեպքում՝ նոտարական վավերացմամբ) լիազորագրի հիման վրա, որը պետք է ներկայացվի Բրոքերին, այլապես նշված անձը Բրոքերի կողմից Հաճախորդի լիազորված ներկայացուցիչ չի համարվի:
- 6.5 6.4 կետը չի կիրառվում, եթե Հաճախորդը ֆիզիկական անձ է և ինքն է հանդես գալիս որպես պատասխանատու/իրավասու անձ Բրոքերի հետ հարաբերություններում կամ, իրավաբանական անձ Հաճախորդի դեպքում, վերջինիս անունից հանդես է գալիս տնօրենը/գործադիր իրավասու մարմինը:
- 6.6 Սույն պայմանագրի շրջանակներում Բրոքերի հետ հաղորդակցության նպատակներով Հաճախորդի նույնականացման համար Հաճախորդին շնորհվում է անհատական ծածկագիր: Նշված ծածկագիրը համապատասխանում է Հաճախորդի միջոցների հաշվառման ներքին համակարգում նրան շնորհված ծածկագրին: Ծածկագիրը Հաճախորդին է հանձնվում սույն պայմանագիրը կնքելու օրը՝ ստանալու մասին ստորագրությամբ:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԸ

- 7.1 Կողմերի միջև սույն պայմանագրի գործողության կապակցությամբ առաջացած վեճերը ենթակա են լուծման բանակցությունների միջոցով, իսկ 10 օրվա ընթացքում լուծման չգալու դեպքում՝ ՀՀ դատարանների կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 8.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման/կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով՝ մինչև սույն պայմանագրով կամ օրենքով սահմանված հիմքերով դրա գործողության դադարումը: Բոլոր դեպքերում, սակայն, պայմանագիրը շարունակում է գործել ընդհուպ մինչև սույն պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների և պարտականությունների լրիվ և պատշաճ կատարումը՝ ստանձնած պարտավորությունների մասով:
- 8.2 Սույն պայմանագիրը Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ կարող է լուծվել՝ մյուս Կողմին այդ մասին առնվազն 10 օր առաջ գրավոր ծանուցելու պայմանով:
- 8.3 Սույն պայմանագրի լուծման դեպքում Բրոքերն ապահովում է Հաճախորդի դրամական միջոցների վերադարձը վերջինիս՝ այդ միջոցները փոխանցելով Հաճախորդի կողմից նշված հաշիվներին՝ օրենքով սահմանված ժամկետներում, իսկ արժեթղթերը Հաճախորդի ընտրությամբ՝ կամ շարունակվում են հաշվառվել Բրոքերի մոտ վարվող արժեթղթերի հաշվում՝ Պահառության պայմանագրին համապատասխան, կամ փոխանցվում են Հաճախորդի նշած արժեթղթերի հաշվին, կամ օրենքով սահմանված կարգով՝ հանձնարարականի հիման վրա իրացվում են շուկայում և վերածվում դրամական միջոցների, որոնք վերադարձվում են Հաճախորդին համաձայն սույն կետին : Սույն կետում նշված հանձնարարականը Հաճախորդը պարտավոր է տալ սույն պայմանագրի լուծումից կամ այլ հիմքով դադարումից առնվազն 2 օր առաջ և վճարել այդ հանձնարարականի կատարման համար: Հանձնարարականը չներկայացնելու դեպքում արժեթղթերը իրացվում են դրանց շուկայական իրացվելի գնով և ստացված գումարները փոխանցվում են Հաճախորդի՝ սույն պայմանագրում նշված ընթացիկ բանկային հաշվին:
- 8.4 Եթե պայմանագիրը լուծվել է Հաճախորդի նախաձեռնությամբ, վերջինս պարտավոր է հատուցել Բրոքերին դրա լուծման հետևանքով սույն պայմանագրի 8.3 կետի համաձայն անհրաժեշտ դարձած գործողությունների հետ կապված ծախսերը:
- 8.5 Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր ձևով Կողմերի համաձայնությամբ, բացառությամբ Սակագների և Պայմանների փոփոխությունների և լրացումների, որոնք կատարվում են Բրոքերի կողմից միակողմանիորեն: Հաճախորդի համար Բրոքերի միակողմանի փոփոխությունները և լրացումները ուժի մեջ են մտնում՝ այդպիսի փոփոխությունների և լրացումների մասին Հաճախորդին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից 11 օր հետո: Գրավոր ձևը համարվում է պահպանված, նաև եթե համապատասխան փոփոխության վերաբերյալ ծանուցումը (փոփոխության տեքստը ներառող տեքստը) ուղարկվել է Հաճախորդին՝ սույն պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեով, ընդ որում նշված դեպքում փոփոխությունը ուժի մեջ է մտնում այն ուղարկելու պահից 11 օր հետո:
- 8.6 Սույն պայմանագիրը ստորագրելով հաճախորդը հավաստում է, որ գիտակցում է այն փաստը, որ ինքը դասակարգվել է որպես պրոֆեսիոնալ հաճախորդ՝ բոլոր գործարքների գծով և ի վիճակի է գնահատել և կառավարել ներդրումային, սովյալ դեպքում բրոքերային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը: Եթե Հաճախորդը կարծում է, որ ի վիճակի չէ գնահատել և կառավարել ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը, պրոֆեսիոնալ հաճախորդի պարտավորությունն է դիմել ներդրումային ծառայություններ մատուցող անձին՝ իրեն որպես բոլոր կամ որոշակի գործարքների գծով ոչ պրոֆեսիոնալ

հաճախորդ վերաբերվելու համար, ինչը հնարավորություն կտա օգտվել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջներից: Հաճախորդը պարտավոր է Բրոքերին տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել իր պրոֆեսիոնալ դասակարգման վրա՝ հաշվի առնելով ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի՝ «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ով սահմանված կանոնները:

- 8.7 Մույն պայմանագրի 8.6 կետը կիրառվում է սույն պայմանագիրը կնքելուց առաջ սույն պայմանագրի գործողության նպատակներով որպես պրոֆեսիոնալ դասակարգված Հաճախորդների նկատմամբ:
- 8.8 Մույն պայմանագիրը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ՝ օժտված հավասարազոր իրավաբանական ուժով:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲՐՈՔԵՐ	ՀԱՃԱԽՈՐԴ
<p>«Ամերիաբանկ» ՓԲԸ ք. Երևան, 0015, Վ. Սարգսյան 2 ՀՎՀՀ 02502212 ՀՀ ԿԲ 103002101576 հեռ. 561111</p> <p>ստորագրություն ԿՏ</p>	